« 26 » մարտ 2025թ. No 1771 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 6163-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի N 4547-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 04-Ի N 1297-Ա ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածները և 37-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N 01/1172-25 առ 18.03.2025թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1.ՀՀ առողջապահության նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 6163-Ա հրամանի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված Վերապամիլ Ալկալոիդ դեղահատեր թաղանթապատ 40մգ (N 20531), Վերապամիլ Ալկալոիդ դեղահատեր թաղանթապատ 80մգ (N 20532) և Պոլեզին դեղահատեր թաղանթապատ 5մգ (N 21636) դեղերի գրանցման հավաստագրերը՝ համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:»:

2. ՀՀ առողջապահության նախարարի 2024 թվականի օգոստոսի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 4547-Ա հրամանի 3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1-ի կետով.

«3.1. Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված Պոլեզին կաթիլներ ներքին ընդունման դեղի N 21635 գրանցման հավաստագիրը՝ համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:»:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի մարտի 04-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 1297-Ա հրամանը:

4. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Ն. Ռոմանովային՝

1) սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, առողջապահության նախարարության հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը.

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157